ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՔԱՂԱՔԻ
Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 1 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ г. ВЕДИ
ОСНОВНАЯ ШКОЛА №1 им. Г. МАРГАРЯНА

0601 թ. Վեղի, Կոմիտասի 9
հեռ. (0234) 2-41-80

Индекс 0601 г. Веди, ул. Комитаса 9
тел. (0234) 2-41-80

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Վեղի քաղաքի Գ. Մարգարյանի անվան №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «ՀԵՊ»-ի (15 դասաժամ), «Հայոց լեզու» (22 դասաժամ) «ՆԶՊ»-ի (1 դրույք, քաղպաշտպանության 0,5 դրույք), «Մաթեմատիկա»-ի (25 դասաժամ), <<Կերպարվեստ>>-ի (9 դասաժամ) և <<Ֆիզկուլտուրա>>-ի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասարաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՆ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 9-ից մինչև նոյեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 16^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 24-ի՝ ժամը 12:00-ին, ՀՀ Արարատի մարզի Վեղի քաղաքի Գ. Մարգարյանի անվան №1 հիմնական դպրոցում, Կոմիտասի 9-ը հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 2-41-80 հեռախոսահամարով: